ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> 05 2012թ. N: 123-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ՀՈՌՈՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՐՏՅՈՄ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ, ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ԳՈՒԼՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 101-րդ կետի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> 11-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Հոռոմի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անդամներ Արտյոմ Ղարիբջանյանի 2013 թվականի ապրիլի 29-ի, Հակոբ Հարությունյանի 2013 թվականի ապրիլի 30-ի, Տիգրան Գուլյանի 2013 թվականի ապրիլի 30-ի, Հովհաննես Կարապետյանի 2013 թվականի մայիսի 6-ի դիմումները և <<Հոռոմի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2013 թվականի մայիսի 21-ի տեղեկանքը.

որոշում եմ.

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Հոռոմի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամներ Արտյոմ Ղարիբջանյանի, Հակոբ Հարությունյանի, Տիգրան Գուլյանի, Հովհաննես Կարապետյանի, Տիգրան Մուրադյանի լիազորությունները:
2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին>> N 51-Ա որոշմամբ հաստատված N 83 հավելվածից հանել <<Ղարիբջանյան Արտյոմ – ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված>>, <<Հարությունյան Հակոբ – ՀՀ Շիրակի մարզպետի կողմից առաջադրված>>, <<Գուլյան Տիգրան - ՀՀ Շիրակի մարզպետի կողմից առաջադրված>>, <<Կարապետյան Հովհաննես – մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված>>, <<Տիգրան Մուրադյան – ծնողական խորհրդի կողմից առաջադրված>> բառերը:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝